


საქართველოს ეროვნული ბანკი
National Bank of Georgia



საპარლამენტოს არეგისტრირებული სარეგისტრო ფონდი



ფინანსი



საქართველოს ეროვნული ბანკი
National Bank of Georgia



BTU BUSINESS & TECHNOLOGY UNIVERSITY

Ի՞նչ է

խնայողությունը:

Խնայողությունը ցանկացած նպատակով գումարի կողքի դնելն է, այսինքն՝ պահելը: Խնայողությունը ֆինանսական նպատակներին հասնելու և ֆինանսական բարեկեցություն ստեղծելու նախապայմանն է: Անկախ եկամտի չափից՝ միշտ պետք է փորձել կողքի դնել դրա մի մասը, որպեսզի խնայողություն ստեղծելը ժամանակի ընթացքում սովորություն դառնա:

Փորձագետները խորհուրդ են տալիս. այն բանից հետո, երբ ստացաք եկամուտը և կողքի դրեցիք բոլոր անհրաժեշտ ծախսերի համար գումարը (ներառյալ, օրինակ, կոմունալ վճարումները), անպայման պետք է պահեք եկամուտների մի մասը խնայողությունների տեսքով և միայն դրանից հետո ծախսեք գումարը ձեր ցանկությունները բավարարելու համար: Լավ կլինի, եթե խնայեք ձեր ամսական եկամտի առնվազն 10-20%-ը և խնայողությունների հարցում կոնկրետ նպատակներ դնեք: Դրա հետ մեկտեղ, դուք պետք է նախօրոք որոշեք, թե որքան գումար եք ցանկանում հավաքել, և մոտավորապես որքան ժամանակ կպահանջվի դա անելու համար:

Ֆինանսական

նպատակները

Ֆինանսական նպատակները կարող են բազմազան լինել՝ ինչ-որ առարկա գնել, ֆինանսավորել կրթությունը, խնայողություն ստեղծել չնախատեսված ծախսերի համար (օրինակ՝ վնասված թանկարժեք տեխնիկայի վերանորոգումը) և այլն:

Ֆինանսական նպատակը կարող է լինել և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ: Կարճաժամկետ նպատակներին կարելի է հասնել շաբաթների կամ ամիսների ընթացքում, և դրանք կապված չեն մեծ ֆինանսական ծախսերի հետ: Նման նպատակ կարող է լինել, օրինակ, նոր գիրք կամ հեծանիվ գնելը: Երկարաժամկետ ֆինանսական նպատակներին հասնելը պահանջում է համեմատաբար մեծ ժամանակ և գումար:

Նման նպատակ կարող է լինել, օրինակ, արտասահման մեկնելը կամ բնակարան գնելը: Կարևոր է ռեալ գնահատել որոշակի գումար հավաքելու համար պահանջվող ժամանակը: Դրանից բացի դուք նաև պետք է հոգաք այն մասին, որ խնայված գումարը ապահով պահեք:

Բանկային դեպոզիտների մասին

Գումար խնայելու նպատակով կարող եք օգտվել բանկային դեպոզիտից, նույն ինքը՝ ավանդից: Դեպոզիտը ֆիզիկական անձի կամ ընկերության կողմից առևտրային բանկում որոշակի ժամկետով դրված գումար է: Բանկը ավանդի վրա որոշակի պարբերությամբ կուտակում է լրացուցիչ գումար, որը կոչվում է տոկոսային եկամուտ: Դեպոզիտի վրա տոկոսային եկամուտը կարող է հաշվարկվել տոկոսների հաշվարկման պարզ կամ բարդ եղանակով:

Դիտարկենք այսպիսի օրինակ: Եթե դեպոզիտ եք դնում 100 լարի, իսկ տարեկան տոկոսադրույքը կազմում է 10%, դա նշանակում է, որ սկզբնական, այսինքն՝ բազային գումարին՝ 100 լարի, տարին մեկ անգամ կավելանա 10%, այսինքն՝ 10 լարի: Արդյունքում 1 տարի ժամկետով դեպոզիտից օգտվելու դեպքում ձեր խնայողությունները կդառնան 110 լարի, 2 տարվա դեպքում՝ 120 լարի, 3 տարվա դեպքում՝ 130 լարի եւ այլն: Տոկոսագումարի հաշվարկման նման մեթոդը կոչվում է պարզ: **«Պարզ»** տոկոսը կհաշվարկվի միայն ավանդի բազային գումարից (մեր օրինակի դեպքում՝ 100 լարիից):

Ի տարբերություն «պարզ» տոկոսների, «բարդ» տոկոսները հաշվարկվում են ինչպես ավանդի բազային գումարի, այնպես էլ բազային գումարի վրա հաշվարկված տոկոսների վրա: Պետք է նաև նկատի ունենալ, որ տոկոսները հաշվարկվում են տարին մեկ անգամ:

Դիտարկեք նաև վերը նշված օրինակը, բայց այս անգամ օգտագործեք տոկոսների հաշվեգրման բարդ մեթոդը. Առաջին տարում հաշվեգրված տոկոսադրույքը կրկին կկազմի 100 լարիի 10%-ը, այսինքն՝ 10 լարի, իսկ ձեր խնայողությունները 1 տարի հետո կրկին կկազմեն 110 լարի; Սակայն երկրորդ տարում տոկոսը կավելանա արդեն 110 լարիին և այն կկազմի 110 լարիի 10%-ը, այսինքն՝ 11 լարի: Ըստ այդմ՝ ձեր ավանդի ընդհանուր գումարը երկրորդ տարվա վերջում կկազմի 121 լարի՝ «պարզ» տոկոսադրույքով ստացված 120 լարիի փոխարեն: Երրորդ տարում 10 տոկոսը կհաշվարկվի 121 լարիից և այլն: Այսպիսով, տոկոսների հաշվեգրման բարդ մեթոդով ստացված եկամտաբերությունն ավելի բարձր է, քան պարզ մեթոդով ստացված եկամտաբերությունը:

Հետևաբար, պարզ է, որ «բարդ» տոկոսադրույքով կուտակվող ավանդը երկարաժամկետ հեռանկարում ավելի շահավետ է, քան «պարզ» տոկոսադրույքով կուտակվող ավանդը:

Ի՞նչ տեսակի ավանդներ գոյություն ունեն:

Ավանդը կարող է լինել ինչպես ժամկետային, այնպես էլ ցպահանջ (անժամկետ): Կարող ենք տարբերակել ավանդի մի քանի տեսակներ՝ ժամկետային ավանդ, աճող ժամկետային ավանդ, մանկական ավանդ և խնայողական/ցպահանջ ավանդ: Քննարկենք նրանցից յուրաքանչյուրը:

Ժամկետային ավանդը բացվում է որոշակի ժամկետով (օրինակ՝ 12 ամիս) և այս ժամկետը լրանալուց հետո հաճախորդը վերադարձնում է ինչպես սկզբնապես ավանդադրված կամ բազային գումարը, այնպես էլ դրա վրա հաշվեգրված տոկոսները: Սովորաբար ավանդի տոկոսները հաշվարկվում են ժամկետի վերջում կամ ամսական կտրվածքով՝ կախված նրանից, թե ինչ է նախատեսված պայմանագրով: Եթե հաճախորդը ժամկետային ավանդից վաղաժամկետ կհանի գումարը, ապա դա կհամարվի ավանդային պայմանագրի պայմանների խախտում և նրան կհաշվեգրվի ավելի ցածր տոկոսադրույք, քան կհաշվարկվեր գումարը ժամկետի ավարտին ստանալու դեպքում (կամ կարող է ընդհանրապես չստանալ տոկոսները):

Աճող (ժամկետային) ավանդը նույնպես ժամկետային ավանդի տեսակ է, և այն նույնպես բացվում է որոշակի, կանխորոշված ժամկետով, չնայած ի տարբերություն ստանդարտ ժամկետային ավանդին,

աճողը ավանդի վրա պարբերաբար կարելի է գումար ավելացնել: Աճող ավանդի առավելություններից մեկն այն է, որ այն հնարավորություն է տալիս կուտակել և ամսական ավելացնելը սեփական խնայողությունները: Չնայած, որպես կանոն, հաճախորդն ավելի ցածր եկամտաբերություն է ստանում աճող ավանդի վրա, քան ստանդարտ ժամկետային ավանդի վրա:

Մանկական ավանդը նույնպես ժամկետային ավանդի տեսակ է, և դրա վրա, ինչպես աճող ավանդի վրա, հնարավոր է պարբերաբար գումար ավելացնել: Մանկական ավանդը, ինչպես ենթադրում է անունը, բացվում է երեխայի անունով և գործում է մինչև նրա չափահաս դառնալը:

Ինչ վերաբերում է ցպահանջ, այսինքն՝ խնայողական ավանդին, ապա այս տեսակի ավանդը բացվում է առանց որևէ ժամկետի և ինչպես անունն է ցույց տալիս՝ ցանկացած պահի հնարավոր է ինչպես գումար ավելացնել, այնպես էլ՝ հանել: Ավանդի այս տեսակը խնայելու լավ միջոց է, երբ հաճախորդը նախապես չգիտի, թե երբ կարող է գումարն իրեն անհրաժեշտ լինի, այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ խնայողական ավանդն ունի համեմատաբար ավելի ցածր տոկոսադրույք, քան ստանդարտ ժամկետային և աճող ավանդները:

Ինչպե՞ս անվտանգ խնայել գումարը:

Ինչպես արդեն նշեցինք, բանկային ավանդների միջոցով հնարավոր է գումար խնայել տարբեր նպատակներով: Նշենք, որ 2018 թվականից գործում է ավանդների ապահովագրման համակարգը, որի շրջանակներում յուրաքանչյուր առևտրային բանկում ֆիզիկական անձանց բոլոր տեսակի հաշիվներն ու ավանդները (այդ թվում՝ ընթացիկ, ժամկետային, ցպահանջ) ավտոմատ կերպով ապահովագրվում որոշակի գումարի դիմաց ինչն իրենից ներկայացնում է սպառողների խնայողությունները պաշտպանելու կարևոր գործիք:

Գումար խնայելիս կարևոր է զգուշորեն ընտրել այն կազմակերպությունը, որում պատրաստվում եք գումարները պահպանել ու փորձել գտնել հնարավորինս շատ տեղեկություններ նրա բիզնես գործունեության մասին: Հիշեք, որ խոստացված անհիմն բարձր տոկոսադրույքները, այլ հավասար պայմաններում, նույնպես կապված են բարձր ռիսկի հետ: Այս գրքույկում մենք ավելի մանրամասն կքննարկենք ֆինանսական անվտանգությունը, այդ թվում բուրգային սխեմաները: *

Ռեսուրսներ, որոնք ցանկալի է խնայել փողից բացի:

Հիշեք, որ խնայողությունը կապված չէ միայն փողի հետ: Դուք կարող եք խնայել նաև այլ կարևոր ռեսուրսներ, օրինակ՝ ժամանակը, որն այսօր աշխարհի ամենաթանկ «ակտիվներից» է, օրինակ՝ փորձեք չհետաձգել անելիքները վաղվա համար կամ ավելի քիչ ժամանակ ծախսեք սոցիալական ցանցերում, էլեկտրաէներգիան՝ անջատեք էլեկտրական սարքերը, երբ դրանք չեք օգտագործում և օգտագործեք էներգաարդյունավետ լամպեր, նաև ջուրը՝ փակեք ծորակը, երբ այն չեք օգտագործում և այլն: Այս քայլերով դուք ոչ միայն կխուսափեք ավելորդ ծախսերից, որոնք, ի վերջո, կօգնեն ձեզ ավելի շատ գումար խնայել, այլև հոգ կտանեք շրջակա միջավայրի մասին:

Մաղթում ենք
ձեզ հաջող
խնայողություն
ներ!

